# ՎԱՐԴԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԻ ՏԷՐՏԷՐԵԱՆ

*Վարդանը վերջին անգամ մասնակցելով Վերին Շէնի ազատագրմանը, իր երկու ընկերների՝ Ջիւանի եւ Կոլիայի հետ միասին փրկել է 20 ազատամարտիկների կեանքը:*

Վարդան Յարութիւնի Տէրտէրեանը ծնուել է 1968 թ.: Սովորել եւ աւարտել է մարզական թեքումով թիւ 115 դպրոցում, որպէս կոփամարտիկ: Ունեցել է մաստերսպորտի կոչում, պարգեւատրուել է պատուագրերով եւ ունեցել շատ սպորտային յաջողութիւններ: Մրցումներու մասնակցել է խորհրդային տարբեր քաղաքներում: Ծառայել է խորհրդային բանակում:



Վարդան Տէրտէրեան

Վերադարձել է 1988 թ.: Այդ ժամանակ սկսուել է Ղարաբաղեան շարժումը եւ մասնակցել է այդ շարժմանը: Անուհետեւ այդ ընթացքում միաժամանակ ընդունուել է Նոր Հաճընի գիւղատնտեսական տեխնիկումի տնտեսագիտական բաժնում՝ հեռակայ: Իսկ երբ ստեղծուեց յատուկ գունդը, Վարդան Տէրտէրեանը տեղափոխւում եւ ընդունւում է յատուկ գնդում, որպէս մարտիկ: Վարդան Տէրտէրեանը եղել է համեստ, խելացի եւ բոլորի կողմից յարգուած ու սիրուած: Մասնակցել է Երասխաւանի, Արցախի մարտերին, նաեւ Շահումեանի շրջանի Էրքեջ, Մանաշիդ գիւղերի ազատագրմանը:

Վարդանը վերջին անգամ մասնակցելով Վերին Շէնի ազատագրմանը, իր երկու ընկերների՝ Ջիւանի եւ Կոլիայի հետ միասին փրկել է 20 ազատամարտիկների կեանք: 1991 թ. յուլիսի 21ին զոհւում է Վարդան Տէրտէրեանը (ձեռագիր):

ԱՆՍՏՈՐԱԳԻՐ